ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ

Տնօրեն Լ.Մելիքյան

# ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔ

## ԳՈՅԱԿԱՆՆԵՐԸ ԵՂԻՇԵ ՉԱՐԵՆՑԻ « ԵՍ ԻՄ ԱՆՈՒՇ ՀԱՅԱՍՏԱՆԻ» ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅԱՆ ՄԵՋ

ՆԱԽԱԳԾԻ ՂԵԿԱՎԱՐՆԵՐ՝ Ն.ՄԿՐՏՉՅԱՆ

Ա. ՀՈՎՆԱՆՅԱՆ

Ջ. ԱՆՏՈՆՅԱՆ

2023

# Նախագծային աշխատանք

Նախագծի ղեկավարներ՝ Նաիրա Մկրտչյան, Անահիտ Հովնանյան, Չինարիկ Անտոնյան / դասարան՝ 7-րդ / Ուս. տարի՝ 2023-2024

| ԹԵՄԱ՝ ԳՈՅԱԿԱՆ ԱՆՈՒՆ | |
|---|---|
| **Նախագծի անվանում՝** | Գոյականները Եղիշե Չարենցի «Ես իմ անուշ Հայաստանի» բանաստեղծության մեջ |
| **Առարկա(ներ)՝** | հայոց լեզու, հայ գրականություն, մաթեմատիկա, ֆիզիկա |
| **Ուսումնական տարի, կիսամյակ՝** | 2023-2024, 1-ին կիսամյակ |
| **Դասարան՝** | 7-րդ |
| **Տևողություն՝** | 1 ամիս |
| **Նախագծի իրականացման փուլեր** | 5 փուլ |
| **Վերջնաժամկետ՝** | 15 դեկտեմբերի |
| **Տեսակը՝** | ☐ներառարկայական ☒միջառարկայական<br>☐վերառարկայական |
| **Ձևաչափը՝** | ☐տեսական ☒գործնական<br>☐անհատական ☐խմբային<br>☐ընթացիկ ☐ամփոփիչ |

## Նախագծի նպատակը՝

- Սովորեցնել աշխատել տեքստի վրա,կիրառել տեսական գիտելիքները գործնական առաջադրանք կատարելու համար, ամրապնդել գիտելիքները գոյական թեմայի վերաբերյալ, կարողանալ կատարել ժամանակի և աշխատանքի բաշխում:
- Ճանաչել շրջապատում հանդիպած ֆիզիկական և քիմիական երևույթները:
- Խորացնել գիտելիքները բնության երևույթների մասին:
- Զարգացնել համագործակցային հմտությունները:
- Օգտագործել տարբեր աղբյուրներից տեղեկույթ:
- Զարգացնել եզրակացություններ կատարելու կարողությունը՝ հիմնված գիտական ճանաչողության մեթոդների վրա:

## Նախագծի վերջնարդյունքները՝

- Ամբողջությամբ կյուրացնեն Չարենցի բանաստեղծության կառուցվածքը և բովանդակությունը, կառանձնացնեն գոյականները ըստ տեսակի, թվի, առումի, հոլովի, կգտնեն կապը բառագործածության և պատկերավորության միջև, ձեռք կբերեն կայուն գիտելիքներ գոյական անուն թեմայից, կստանան հետազոտական աշխատանք կատարելու նախնական գիտելիքներ և հմտություններ:
- Կտարբերեն տարաբնույթ ֆիզիկակակն և քիմիական երևույթները:
- Գործնական աշխատանքների միջոցով ձեռք կբերեն տեսական գիտելիքներ և կզարգացնեն համագործակցային հմտությունները:
- ՏՀՏ-ի կիրառմամբ կնկարագրեն բնության հրաշք երևույթները:

Ներկայացնել նախագծի վերջնարդյունքները. որոնք բխում են առարկայական ծրագրից և ՀՊՉ-ից

Հ4. Հ7. Հ8. Հ28. Հ29. Հ30. Հ31

## Նախագծի նկարագիրը

1.«Ես իմ անուշ Հայաստանի » բանաստեղծությունից դուրս են գրելու բոլոր գոյականները հեղինակի օգտագործած ձևով: Հաշվելու են դրանք: Հաշվելու են գործածված բոլոր բառերը և գտնեն գոյականների տոկոսը:

2. Առանձնացնելու են գոյականները`

ա) ըստ տեսակների (հատուկ և հասարակ, իրանիշ և անձնանիշ)

բ)ըստ թվի(եզակի և հոգնակի)

գ)ըստ առումի (որոշյլ և անորոշ)

դ)ըստ հոլովի և հոլովման

3. Հաշվելու են բոլոր գոյականների գործածության դեպքերը

4.Որոշելու են դրանց տոկոսները

5.Կազմելու են գոյականների գործածության դիագրամներ

6.Պատրաստելու են ալբոմ համապատասխան բառաշարքերով և գծապատկերներով:

7. Սովորողները իրականացնելու են տարբեր տեսակի փորձեր, որոնց արդյունքում պարզ է դառնալու տվյալ երևույթը ֆիզիկական է ,թե քիմիական

8. Ներկայացնելու են բնության երևույթների օրինակներ

9. Պատրաստելու են բնության երևույթները ներկայացնող թիկնոցներ

10. Թեմայի վերաբերյալ պատրաստելու են նկարազարդ ալբոմ

11. Կներկայացնեն ՏՀՏ-ի կիրառմամբ թեմաի վերաբերյալ սահիկաշար:

## Կարողունակություններ, որոնք կզարգանան այս նախագծի ընթացքում

- [x] Սովորել սովորելու կարողություն
- [x] Ինքնաճանաչողական և սոցիալական կարողություն
- [ ] Տնտեսական կարողություն
- [x] Մաթեմատիկական և գիտատեխնիկական կարողություն
- [x] Լեզվական գրագիտություն և կարողություն
- [x] Մշակութային կարողություն
- [ ] Ժողովրդավարական և քաղաքացիական կարողունակություն
- [x] Թվային և մեդիա կարողունակություն

## Հետազոտության հիմնախնդիրը (մարտահրավերային հարցը)

Աշակերտները հաճախ լավ չեն յուրացնում քերականական նյութը, որովհետև չեն հետաքրքրվում դրանց կիրառական նշանակությամբ:Այս նախագծային աշխատանքը հետաքրքրություն կառաջացնի և աշակերտներին կնախապատրաստի ավելի լուրջ հետազոտական և վիճակագրական աշխատանք կատարելու:

Կնպաստի բացատրել երևույթները ստացած գիտելիքների հիման վրա:

ՀՊՉ - սովորողների շրջանում կձևավորվի գիտելիքներ բնության ուսումնասիրության ֆիզիկական մեթոդների մասին: Կզարգացնի գործիքների և սարքերի միջոցով ֆիզիկական երևույթների և օբյեկտների հատկությունների ուսումնասիրման և վերլուծության հմտություններ:

## Հիմնական հարցեր

Որքա՞ն հաճախ է Չարենցը գործածում գոյականներ և ի՞նչ քերականական ձևերով:

Ինչպե՞ս են գիտելիքներ ձեռք բերում բնության երևույթների մասին:

## Սովորողների ինքնուրույն հետազոտական գործունեություն

Հանգամանալից ներկայացնել հետազոտության քայլերը՝ առաջնորդվելով ՆՈՒ Ոսկե չափանիշով:

## Միջառարկայական կապեր

| | | |
|---|---|---|
| ☒ հայոց լեզու | ☐ քիմիա | ☐ աշխարհագրություն |
| ☒ հայ գրականություն | ☐ հայոց պատմություն | ☐ երաժշտություն |
| ☐ օտար լեզուներ | ☐ կենսաբանություն | ☐ կերպարվեստ |
| ☒ մաթեմատիկա | ☐ բնագիտություն | ☐ ինֆորմատիկա |
| ☐ հասարակագիտություն | ☒ ֆիզիկա | ☐ այլ |
| ☐ համաշխարհային պատմություն | ☐ մարմնակրթություն | ☐ բեմարվեստ |

## Տարիքային խումբ

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| ☐ Կրտսեր դպրոց | | | ☒ միջին դպրոց | ☐ ավագ դպրոց | ☐ խառը |

## Նախագծի վերջնարդյունքների ներկայացման տեսակներ

| | |
|---|---|
| ☐ Ամսագիր կամ թերթ, պաստառ | ☐ Վեբ-կայք |
| ☐ Տեսանյութ | ☒ Սահիկաշար |
| ☐ Տեղեկատվական թերթիկ | ☐ Կոմիքս |
| ☐ Ձայնվածք (փոդքասթ) | ☒ Գրքի նկարազարդում |
| x Ալբոմ և գծապատկերներ | ☐ |